

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 10—12

ՀՈԿՏԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԿԷ. ՏԱՐԻ 1953

Կ Յ Ո Ւ Ր Դ Ք

Ս. ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

ՅԱՌԱՉԱՐԱՆ

Ս. Եփրեմ իր գրուածքներու մէջ սիրած է արձակէ աւելի տաղաչափօրէն արտայայտուիլ: Ասորիները կը դանազանեն երկու տեսակ տաղաչափութիւն. Մաղբաշա (յք. Մաղբաշէ), որ կազմուած է ճՐՏ, «կցեցի» արմատէն իրբեւ «կցորդ» կամ «կցուրդ». եւ Մեմբա, յառաջագայած ճՄՐ, «ասացի» արմատէն, համազօր հայերէն «ասացուածք»ի: Հայերէնի մէջ ալ կցեմ ունի «երգեմ» իմաստը, ինչպէս նաեւ ասեմ կը կիրարկուի «երգեմ» իմաստով:

Մաղբաշէ կ'անուանուին այն չափական գրութիւնները, որոնք հակաճառական են եւ պայքարական եւ եղանակաւորուած իրբեւ երդեցողական տաղ: Իսկ Մեմբա, որ նոյնպէս տաղաչափական է, բայց սահմանուած է արտասանութեան համար¹:

Ուստի յանուն Եփրեմի հայ գրականութեան մէջ պահուած 51 կցուրդները հարկ է համարել Մաղբաշէ, ինչպէս նոյն հօր անունով հասած «Ասացուածք»՝ Մեմբա:

Մինչեւ 1939 ծանօթ էին այս «կցուրդք» միակ ձեռագրէ, պահուած էջմիածին, 821 համարի տակ:

Էջմիածնի Թ. 821 (Կար. 902):

Ձեռագիրս էջմիածնի ձեռագիրներու հին Յուլիանի մէջ, որ կազմուած է Դանիէլ Վ. Շահնազարեանէ եւ հրատարակուած Յակոբ Կարենեանցէ Տիգրիս 1863ին, 902 համարին տակ կը նկարագրուի.

«Եփրեմի ճառերսիր քառածալ նորապիր, գրեալ ի թղթի ի վանս Ակներոյ ի Գրիգոր վարդապետէ վանհօրէ սորին, պարունակին ի սմա ա. ճառ կցորդք նորին, յորոց տասն եւ չորսն պակաս ի ծայրն: Բ. Ոսկերեանի յԱնհասիցն գրոց: Գ. ճառք Գրիգորի սկեւոացոյ յաղագս սիրոյ: Դ. Նորին յաղագս ապաշխարութեան, թերի: Ե. Վասն պահոց: Զ. Վասն ողորմութեան: Է. Վասն աղօթից՝ զայստսիկ գրեալ է իսկ ինքն հեղինակն: Ը. Ոսկերեանի յորդորակ ի Յովհաննու մեկնութենէ. ի թուին Հայոց ՉԿԲ. 1313. չունի զխշաստկարան. ի սկիզբն ունի թերութիւնս» (էջ 77):

Հաղորդուած տեղեկութիւններս կարօտ են սրբագրութեան:

Ձեռագիրը ութածալ է, իւրաքանչիւր էջ ունի 12—13 տող, գրուած բութրդեր: Սկզբէն եւ մէջէն ինկած են թուղթեր, կան նաեւ սխալ տեղաւորուած թուղթեր: Կորսուած են 15 կցուրդ եւ ԺԶ. ի սկիզբը: Գրուած Ակների վանքը 1313ին Գրիգոր (ո՛չ Սկեւոացի) եւ Յովհաննէս գրիչներէ. նորոգուած թումա կազմողէ 1596ին Թուրքուրան: Պահուած է ոչ լաւ հանգամանքի մէջ:

¹ Հմմտ. A. Baumstark, Geschichte der syrischen Literatur, Bonn 1922, S. 39—40. Ա. վարդանեան, «կցուրդք». Հանդէս Ամսօրեայ 1929, էջ 176—178:

Չեռագիրս ցուցակագրած եմ 1926ին, ուսումնասիրած եմ 1927/28 տար-
ւոյն: Դժբախտաբար Յուցակագրութիւնս չունիմ տրամադրութեանս տակ:

Բովանդակութենէն կարող եմ յիշել այժմ միայն՝

Թղ. 1—74 Կցուրդք Եփրեմի (ԺԶ.—ՄԱ.), անվերնագիր, սկզբէն դուրս
ինկած են Ա.—ԺԵ. Կցուրդք եւ ԺԶ. Կցուրդին սկիզբը:

Թղ. 75—98ր. Յովհ. Ոսկերեանի յԱնհասից զրոյց:

Թղ. 99ա—127ր. Երանաշնորհ եւ սուրբ վարդապետին Գրիգորի Սկեւ-
ոացոյ ասացեալ յաղագս հոգևորական եւ սուրբ սիրոյ: Յամենայն ժամ
զԱստուած յիշել արժան է... (մէջէն թղթեր ինկած):

Թղ. 128ա—146ր. Նորին ասացեալ յաղագս ապաշխարութեան: Արդ
պարտ է ամենեցուն... (վերջը թերի):

Յուցակին մէջ նշանակուած է. զ. է. ճտուերը անանուն են: Չեռագրին
վերջին թուղթերը (240—243) կը պատկանին Ա. մասին:

Չեռագրիս Ա. մասին (թղ. 1—98ր) գրիչն է Գրիգոր Ակներցի, որուն են
Յիշատակարաններս.

1. Թղ. 74ր. Կատարեցաւ Կցուրդք ասացուածք Եփրեմի երանելոյ ձե-
ռամբ անարհեստ զրոյի Գրիգորի սպասաւորի Ակներոյ վանիցս, ի թվ. ՉԿԲ.
ի սոյն ամի սկիզբն արարաք շինման բերդին որ ի Քարտիզկոցն:

2. Թղ. 55ա. Անկիրթ վերակացուիս սրբոյ անապատիս ողորմեա Տէր իմ
Յիսուս:

3. Թղ. 242ա (սխալ գետեղուած). «Բժշկեալ, Տէր, աստուածային սպե-
ղանաւք (ա՛յսպէս) քո զխրիստայթեալ վէրս հոգւոյ գրողկան սուրբ մարտիրոս՝
Գրիգորի սպասաւորի սուրբ անապատիս Ակներոյ...»:

4. Թղ. 99աէն սկսեալ շարունակած է զըջութիւնը Յովհաննէս գրիչ-
իմէ են.

5. Թղ. 128ա. «... գտացաւ զրոյս զերջանիկ հայրն իմ ըստ հոգոյ
զԳրիգ' ք՛. եւ զանարժան զրիչս զՅովհէն յիշեսցիք...»:

6. Թղ. 142բ—143ա. Լուսանցքի վրայ. «Յաւուր ննջման սրբոյն Գրիգորի
սեպտեմ' Լ. մի ոմն մանկագոյն քա՛հ. վաղճանեցաւ, որոյ ողորմեացի Քրիս-
տոս: Կոս՛ Կապ. »:

7. Թղ. 181ա. Այնմ բնակութեան արժանի նրասցէ Քրիստոս Աստուած
գտացաւ զրոյս զԳրիգոր՝ զառաջնորդ անապատիս...:

Չեռագիրս նորոգուած եւ միւսանգամ կազմուած է 1596ին ի Թլիւրան
ձեռամբ Թումայի, աշակերտին Պետրոս Կարկառեցոյ: Կարեւոր կը համարիմ
հոս ներկայացնել նորոգողին յիշատակարանը (թղ. 244ա).

«Ի թվին ՌԽԵ. ամին նորոգեցաւ զարձեալ վերստին սուրբ գիրքս ի
գեաղաքաղաքն ի Թլիւրան, ի դուռն սուրբ Կարապետին ի հայրապետու-
թեանն տէր Պետրոս քաջ բարունակաւորին մերոյ եւ ի առաջնորդութեանն տէր
Կարապետին եւ աստուածարան վարդապետին, ձեռամբ անարժան Թումայի
աշակերտի...: Դարձեալ աղաչեմ չլինել մեղազիր մեզ վասն պակասութեան
զրոյս եւ խաբնիխուրն լինելոյ. քանզի յոյժ աշխատ եղաք եւ ոչ կարացաք
գտանել զպակասն սորա. եւ այլ օրինակ ոչ գոյր: Բայց գայն որ յայտնի գոյ ի
գիրքս, ուսցիս եւ զմեզ անպարտաւ թողցես: Եւ Քրիստոսի փառք յախտեանս
ամէն»:

Յիշատակարանէս կը տեսնուի, թէ արդէն 1596ին ձեռագիրս քայքայուած
վիճակի մէջ գտնուած է, թուղթերը տակնուվրայ, «խառնիխուռն», այնպէս
որ կազմողն Թումայ չէ յաջողած կազմարոյժ ձեռագրին թուղթերը ճշդիւ դա-

² Ծանօթ անձնաւորութիւն է Գրիգոր Ակներցի, տես իր մասին յօդուածս՝ Հանդէս Ամ-
սօրեայ, 1948, էջ 387—402: Ականց կամ Ակների վանքի մասին՝ մտ, էջ 217—250:

սաւորել եւ պակասները լրացնել, վասն զի ուրիշ օրինակ չէ կրցած գտնել —
«այլ օրինակ ոչ գոյր»:

Այս վիճակի մէջ հասած է ապա ձեռագիրս էջմիածին եւ պահուած հոս
ինամբով:

Չեռագիրը թուղթ առ թուղթ, թերթ առ թերթ մանրակրկիտ քննութեան
առնելով նկատեցի, թէ կան հոն թուղթերու կորուստ, թուղթերու ետեւ-
առաջութիւն, զտայ նաեւ քանի մը թուղթ գետեղուած ձեռագրին վերջերը.
այս թուղթերը չէ տեսած Պետրոսեան:

Թղթերու սկզբնաւորութիւններն եւ վերջաւորութիւնները համեմատու-
թեան զնելով յաջողեցաւ ինձ շատ թղթեր ուղիղ դասաւորութեան բերել. եւ
որովհետեւ չէի կրնար թղթերը տեղաշարժ ընել, բաւականացայ թղթեակ-
ներով մասնանջ ընել թղթերու ուղիղ յաջորդութիւնը, նկատի առնելով
նաեւ ձեռագրին վերջը գտնուած թուղթերը:

Քննութիւններուս արդիւնքը ամփոփեցի ապա յօդուածի մը մէջ, ներս
առնելով օրինակութեամբ նաեւ ձեռագրին վերջը գետեղուած Կցուրդներու
մասերը: Յօդուածս լոյս պիտի տեսնէր «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ: Անցած էր
արդէն զբաքննութենէն. բայց ժամանակս չէր ներած յանձնել թղթատարի:
Վերագործիս չգտայ գայն իմ գրութիւններուս շարքին մէջ: Բարեբախտա-
բար կազմած էի առ ձեռն տետրակիս մէջ Կցուրդներու գլխակարգութիւնները
եւ թղթահամարները մի առ մի, աւրնթեր մասնանջելով նաեւ տեղափոխուած
թուղթերու կարգը եւ կորսուած թուղթերու թիւերը մօտաւորապէս:

Չեռագրին մէջէն դուրս ինկած կորսուած են Ա.—ԺԵ. Կցուրդները.
անոնց հետ նաեւ ԺԶ. Կցուրդին սկիզբը. որ կը սկսի այժմ |||| «Իրրու յեր-
կարէ թիւ ժամանակաց նորա. հսկումն որ ծանր է ամենայն ումեք...»: Վեր-
ջին նախադասութենէն կը տեսնուի, թէ Կցուրդս «Է. գիշերոյ Կցուրդն» է:

Թղ. 1—26 (ԺԶ.—ԻԷ. Կցուրդք) անվթար պահուած են:

ԻԷ. Կցուրդի սկիզբը միայն ունինք: Պետրոսեան (տե՛ս վարը) կը ծա-
նօթագրէ: «աստ պակաս է մի թուղթ... ընդ որս է եւ զլիակարգութիւն ԻԸ.
նօթագրէ: «աստ պակաս է մի թուղթ կը պակսի. բայց միտ չէ գրած Պետ-
Կցուրդին»: Ճիշդ է որ մէկ թուղթ կը պակսի. բայց միտ չէ գրած Պետ-
րոսեան, թէ յաջորդ թուղթերը խառնակ դասաւորուած են. թղ. 27—30 պէտք
է յաջորդեն՝ 26, 30, 28, 29, 27. մէկ թուղթ ինկած է ընդ մէջ 26/30ի.
թղ. 26ր կ'աւարտի «ոչինչ գնա», եւ թղ. 30ա կը սկսի «(եր)թայր գայր»:
Ուստի յաջորդութիւնն է. թղ. 30ր. «եւ ահա» — 28ա «սփով ալեւր»:

Թղ. 28ր. «արարէք զծառայս նորա»: Թղ. 29ա. Կցուրդ ԻԹ:

Թղ. 29ր. «Եւ ոչխարս առ»: — 27ա. «Իւժուցն»:

Թղ. 27ր. կ'աւարտի «ամենայն». շարունակութիւնը կը պակսի 1 թուղթի
անկումով:

Թղ. 31—44 (ԼԱ.—ԼԶ. Կցուրդք) անվթար:

Թղ. 44ր. ԼԷ. Կցուրդին սկիզբն է. «Եկին գուարթունքն առ Արրահամ.
ի մաւոյ եւ ոչ ի հեռուս. ի մաւոյ |||. ընդ մէջ 44/45ի թուղթ մը ինկած:

Թղ. 45 կը սկսի «թեամբ. աւրէնք բնութեան...»:

Թղ. 45—54 (ԼԷ. ի վերջաւորութիւնն եւ ԼԸ.—ԽԱ., վերջը պակաս)

անվթար:

Թղ. 54ր կ'աւարտի. «զի եցոյց նոցա եւ զհաստչու |||. »:

Թղ. 55ա կը սկսի. «գիպեացին մեզ...»: Ուստի ընդ մէջ 54/55 ի չորս
թուղթ ինկած:

Թղ. 55—60 անվթար:

Թղ. 60ր կ'աւարտի. «քանի էր թիւ աշակերտ ||| »:

նակս չէր ներեր օրինակել զայն. փութացի լուսանկարել նոյնը microfilm ուլ: Երկարագոյն ժամանակ մնալով Բէյրութ, արտագրեցի այդ Կցուրդները: 1945ին երկրորդ անգամ երթալով Կիպրոս համեմատեցի օրինակութիւնս ձեռագրին հետ, յատկապէս ցեցակեր տեղիքները:

Թ. 8, թղթեայ ձեռագիր մըն է, 299 թուղթ, մեծութեամբ 17,4 x 13, միասին, բոլորովին զրոյթեամբ, ԺԴ. դարէն. շատ փնտրուած եւ ցեցակեր: Բովանդակութիւնն էր Հարանց Վարքէն եւ Ս. Հարց գրուածքներէ հանուած ձտեր, խրատներ (տե՛ս Յուցակս): Թուղթ 237ր—283ա «Կցուրդ երանելոյն Եփրեմի Խորին Ասորոյ»: Առաջին մասը, որ կը բաղկանայ Ա.—ԺԴ. Կցուրդներէ (թղ. 237ր—270ր), կը լրացնեն էջմիածնի Թ. 821ի պակասները ըստ մեծի մասին: Կը յաջորդեն ԺԶ. ԽԹ. Ծ. ԾԱ. Կցուրդները:

Թղթերու ետեւադասութիւններ կը նշմարուին նաեւ հոս, բայց ոչ գրչին կամ կազմողին անհոգութեամբ, այլ զաղափար—օրինակին խանգարուած ըլլալուն պատճառով:

Թղ. 268ր «գի կորոյս զտ[իս]» ունի իր շարունակութիւնը թղ. 273ա «տունս լողիկ իւրոյ» մինչեւ թղ. 276ր, ուր «որ ընդ նմ էին գիարդ» կը գտնէ իր շարունակութիւնը թղ. 268ր [իս ազդին իւրոյ յ] անաւրինէր սպանանել ի նանիւր»: Իսկ թղ. 273ա «հեթանոսաց շինեցաւ եկե(ղե)ցի» կը շարունակուի թղ. 277ա «յոր տեղի ժողով է աղաւթից»:

Կցուրդներու թուարկութիւնը կանոնաւոր յառաջ չէ բերուած:

Կցուրդ (Ա.)		
„ «Բ.»	լուսանցքի վրայ	
(„ Գ.)	„	„
„ «Դ.»	„	„
„ «Ե.» (Ե.)	„	„
(„) «Զ.» (Զ.)	„	„
„ «Ը.» (Է.—Ը.)	„	„
(„) «Թ.» (Թ.)	„	„
Ա.—Զ. գիշերոյ Կցուրդք		
(ԽԷ.—ԾԱ.) Կցուրդք		

Այս ցանկին համաձայն ձեռագիրս ներկայացուցած է Ա.—Թ. Կցուրդներն եւ Ա.—Զ. Գիշերոյ Կցուրդները անընդհատաբար: Որովհետեւ էջմիածնի օրինակը իբրեւ ԺԶ. Գիշերոյ Կցուրդ մը կ'ընծայէ, պէտք է համարել զայն է. Գիշերոյ Կցուրդ: Կը հետեւի ասկէ թէ Թ. 8 ձեռագրին գրչին իր զաղափար—օրինակին մէջ ունեցած է միայն Ա.—ԺԵ. եւ ԽԷ.—ԾԱ. Կցուրդները:

Շնորհիւ այս ձեռագրի կը լրանայ էջմիածնի Թ. 821ի Ա.—ԺԵ. եւ ԽԹ.—Ծ. Կցուրդներու պակասները եւ ԽԷ.—ԽԸ. Կցուրդներու համար երկրորդ օրինակ կը ներկայանայ:

Այսպէս կը մնայ մեզի էջմիածնի ձեռագրին մէջ աւաղելի կորուստ 14 թուղթ. ասկէ 2—3 թուղթ պահուած է ձեռագրին վերջը, ուստի կորուսած են յատկապէս 11 թուղթ. այս 11էն 3 թուղթ ունինք Նիկոսիայի ձեռագրին մէջ. անվերապատնալի են առ այժմ միայն իրր 8 թուղթ:

Կցուրդի ձառքնտիրներու մէջ:

Ս. Եփրեմի Կցուրդներէն ձառքնտիրներու եւ այլ Հաւաքածոյքներու մէջ ստնուած են հետեւեալները.

- 1. Նորին սուրբ հօրն (Եփրեմի) ի նոյն Գրոց վասն Հսկողաց:
- Ժուժեցայք փոքր մի, առաքինիք, բառնալ զձանրութիւն խաւարի...:
- ՎՋ. ահա գրազուծս յորդորեմ զի եղիցին արթունք...:

Վենետիկ, Թ. 202, թղ. 251ա—252ա (1637. Յուցակ, Բ., 86: Երուսաղէմ, Թ. 154: 917: Հրտ. Մատենագրութիւնք Եփրեմի, Դ., 212—213: Կցուրդք, էջ 19—22:

= Կցուրդ ԺԱ.: F:

2. Երանելոյն Եփրեմի Խորին Ասորոյ վասն քնոյ եւ արթնութեան:

Մի տայք իշխանութիւն քնոյ թագաւորել յանդամս ձեր...: Վենետիկ, Թ. 202, թղ. 250ր—251ա (Յուց., Բ., 86): Երուսաղէմ, Թ. 154: 917: Հրտ. Մատենագրութիւնք, Դ., 211—212: Կցուրդք, էջ 15—19:

= Կցուրդ ԺԲ.: F:

3. Եփրեմի ասացեալ:

Որ քննես զճնունդ որդւոյ...: էջմիածին, Թ. 836, թղ. 183ր—185 (ԺԴ.):

= Կցուրդ ԻԷ.:

4. Ս. Եփրեմի ասացեալ վասն հինգ նկանակացն:

Ժողովեցան յամենայն ազգաց...: էջմիածին Թ. 836, թղ. 186ա—189ա:

= Կցուրդ ԼԸ.:

5. Ս. Եփրեմի Խորին Ասորոյ ի Յարութիւն Փրկչին մերոյ:

Յաւուր յորում յարեաւ Քրիստոս եւ լուծաւ զողունս յաշակերտսն...: ՎՋ. զի գուցէ լիանցուցէ զաւելորդ ըմպողսն:

Վենետիկ, Թ. 202, թղ. 410ր—411ա (Յուց., Բ., 98): Երուսաղէմ, Թ. 154: Նիկոսիա, Թ. 4, թղ. 213ր: Հրտ. Մատենագրութիւնք, Դ., 61—62:

= Կցուրդ ԼԹ.: F:

6. Նորին Եփրեմի Կցուրդ աւրհնութեան:

Եւ արդ իբրեւ եկեր Տէր մեր եւ արբ, որ յաւելան զի՞ արար զայն. զի եւ արդ իբրեւ եկեր Տէր մեր եւ արբ, որ յաւաստորէին...:

ահա զուարթունքն հոգեկէնքն, որ սպասաւորէին...: Երուսաղէմ, Թ. 1, Բ. մաս, թղ. 55ր—56ր (1417. Խապայեան, Յուցակ

անտիպ. Սիւրմէեան չէ առած իր Յուցակին մէջ) եւ 154 յիւ, ըստ Յուցակին

Տ. Սաւարանեանց: = Կիւրեայ Խ. Կցուրդի մասը:

7. Ս. Եփրեմի ասացեալ:

Սրբապէս կերիցուք զմարին...: էջմ. Թ. 640, թղ. 101ր—102ա (1297):

= Կցուրդ ԽԸ.:

Նորայր Բիւզանդացի, որ Թ. 5 նոյնացուցած էր Խ (եւ ԽԱ) Կցուրդին

հետ, եւ հաւանական համարած էր, թէ 1 եւ 2 Կցուրդներ ըլլան, կենթադրէ

նաեւ թէ «ի յիշատակ սրբոց Մակարայեցւոցն՝ Արար Աստուած զերկինս» (տպ. Դ. 125—128), «Յորդորունս պահոց, Պահք յայտնիք...» (Դ. 179—183), «Թերեւս են նոյնպէս ի Կցրդոց», որ ուղիղ չէ (հմմտ. Կորին վարդապետ եւ

Թարգմանութիւնք նորին, էջ ԻԳ):

Կցուրդք, ինչպէս ուղիղ դատած է Հ. Յ. Տաշեան, «այս չքնաղ տա-

ղերս», «Ե. դարու մեսորպեան դպրոցին ճարտարագոյն թարգմանչի մը գրչէն

ելած է» (Յուցակ, էջ 661ր): Իր հոգեշունչ բովանդակութեամբ առանց տա-

րակուսի հայ հոգեւէր ընթերցողներու սիրելի մատենանք եղած է: Չայն կը

սեաններ եղիչէի ձեռքին տակ: Եղիչ իր Պատմութեան Ը. Յեղանակին մէջ կը

գրէ. «ի ծածուկ հարուածոց գիին ծակոտուածսն վիշապին ողջացայց» (էջ 135, Գրէ. «ի ծածուկ հարուածոց գիին ծակոտուածսն վիշապին ողջացայց» (էջ 135, տպ. 1857): Այս աստութեան կը պատահինք ԾԱ. Կցուրդին մէջ. «գի օձն մե-

Անանուն հեղինակ մը, որ գրած է «Հարցմունք եւ պատասխանիք յԱրածոց», Հարց կը ներկայացնէ. «Եփրեմ ի Գիրս Կցորդոց ասէ. Մելքիսեղեկ, որ է Սէմ» (Թ. 4 Մ. Գարրիէլեանի Ձեռագրաց ի Բէյրութ, թղ. 294ր. ԺԴ. դար): Տեսանք «ի Կցորդոց գրոց» հատուածներ ծառնադրներու մէջ:

Էջմիածնի Թ. 821 ձեռագրին ժամանակակից էր Յովհաննէս Երզնկացի. սա իր Մատթէի Մեկնութեան մէջ սքանչելիօրէն հիւսած է Եփրեմի ԺԵ. Կցորդը, այն գլխուն մէջ, ուր հինգ նկանակներու ածման հրաշքը կը պատմուի (Մատթ. ԺԴ. 19—20). կ'ընդգծեմ փոխառեալ տեղիքները.

«Բայց քանզի զհինգ նկանակն ետ ցաշակերտան, եւ այլն ի ձեռս նոցա անեաց՝ որչափ որ պիտոյ էր բազուէթանն. քանզի իբրեւ մատեալ Շմաւոն սոնուլ՝ կարծեաց քէ իւր բաւական իցէ, եւ անքֆն լի բազկօք իւրով տանէր, եւ ի ձեռաց իւրոց ոչ պակասէր, նոյնպէս եւ այլոցն. որպէս զի մի հետ ի մէջ նոցա անկանիցի. քանզի ամենեքեան բաշխէին ժողովրդոցն, ոչ միայն երկուտասանքն՝ այլ եօթանասունքն:

«Կերան ամենեքեան եւ յաղեցան. եւ բարձին գնշխարս կոտորոցն երկոտասան սակառի լի: Ոչ այնքան ունէին որովայնի նոցա՝ որչափ էին ի շալակս նոցա. քանզի չափով ունէին որովայնի նոցա, եւ առանց չափոյ էին բարձեալ շալակի նոցա. մասն զի անոյշ էր հացն՝ քան զմանանայն յանապատին. մասն այնորիկ՝ կերան յագ, եւ բարձին եւս. նա՛ քանզի եւ մանանայն այգուց ապականէր (սպ. անասական), եւ նա որքան յերկարէր անուշանայր» (Մեկնութիւն Մատթէի, Կ. Պոլիս 1825, էջ 325):

Կցորդներու խորագիրը էջմիածնի Թ. 821ին մէջ կը պակսի. Գրիգոր Ակնբոյ հայրը անուանած է զայն «Կցորդի ասացուածք Եփրեմի երանելոյ»: Կերեւոյ թէ մասամբ հետեւելով Բնագրին խորագրին, ինչպէս զգացնել կուտայ Կիպրոսի Թ. 8, խորագրուած է «Կցորդի երանելոյն Եփրեմի խորին ասորոց»: Իբրեւ Հաւաքածոյք նկատուած է «Եփրեմի Գիրք Կցորդոց» ինչպէս կ'անուանէր վերոյիշեալ Անանունը. այսպէս նաեւ Յայսմաւուրք (Արաց ԻԱ. = ԻԸ Յունուարի) պատմելով Ս. Եփրեմի վարքը կը գրէ. «Եւ սկսաւ գրել Մեկնութիւնս Հին եւ Նոր Կտակարանացն եւ ճառս զըջման եւ ապաշխարութեան, եւ ի տօնս ակրունականս եւ վկայից Աստուծոյ. եւ շարականս բազումս (memre) եւ գիրս Կցորդաց եւ աղօթից» (R. Graffin-F. Nau, Patrologia Orientalis, t. XIX, p. 108): Եթէ աս. Մադրաշա տաղաչափական սեռ մը կ'ենթադրէ, հայ գրականութեան մէջ Գիրք Կցորդից կամ պարզապէս Կցորդի Ս. Եփրեմի մաղրաչաներու մէկ հաւաքածոյքը կը ներկայացնէ, թուով ՄԱ, թարգմանուած հայերէնի: Գրիգոր Ակնբոյի հօր «Կցորդք ասացուածք» անուանումը պէտք է անշուշտ գտնել իրարմէ եւ իմանալ Կցորդի, այսինքն ազգ ինչ ասացուածոց Եփրեմի»: Ասանց տարակուսի ծանօթ էին իրեն Եփրեմի գրչէն Ասացուածներ ալ, ինչպէս Ասացուածքն Նիկոմեդացոց:

Այս Կցորդներու ասորի բնագիրը, որքան ինձ ծանօթ է, չէ յայտնաբերուած, ոչ իբրեւ հաւաքածոյք եւ ոչ ալ առանձին մաղրաչաներ:

Հրատարակութեան մէջ ջանք տարած եմ վեր հանել Ս. Եփրեմի Կցորդներու չափականութիւնը, որքան հնարաւոր էր ասանց ասորի բնագրին:

Բնագիրս յեցած է միակ ձեռագրի վրայ, որ ունի թերի կողմեր. 1. ցեցակեր է տեղ տեղ. կերուած են գրեր. երբեմն 2—4 գրեր միանգամայն. երկրայելի ընթացումները սարուածքին մէջ ներկայացուած են նորագիր: 2. Անմիօրինակ է ուղղագրութիւնը, մանաւանդ —ա—, —ն— վերջաւորած բառերու մէջ, ուր կամ յ մը կը կցէ եւ կամ կը գեղչէ (նայ, նմայ, կա, տա եւն). կը գեղչէ լ (որդոյ, սոմնացոյ), հ (Յովաննէս), գործնք ուղղագրած եմ:

Կ Յ Ո Ւ Ր Գ Ք

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

Կ Յ Ո Ւ Ր Գ Ա.

- 1 Բայ մեղ, Տէր, դուռն գանձու աղաւթից խնդրուածոց մերոց. Աղաւթք մեր լիցին մեղ պատգամաւորս
եւ հաշտեցուցեն ընդ աստուածութեան քո:
Լուարուք զայս ամենայն իմաստունք; ունկնդիր լերուք
ամենայն գիտունք.
- 5 Ստացարուք զմիտս եւ զհանձար, իբրեւ ուսեալք եւ իմաստունք: Պատմեցից առաջի ձեր զառաքինութիւնս աղաւթից սրբոց.
Աղաւթք բարձանեցին զժողովուրդն կարմիր,
եւ անցուցին զժողովուրդն ընդ մէջ նորա.
- 10 Նովին աղաւթիւք դարձեալ կարկատեցան.
Եւ ընկրոյզ զՓարաւոն զապստամբն եւ զանաւրէն:
Աղաւթք իջուցին զմանանայն յերկնից.
աղաւթք հանին զլորտամարզն ի ծովէն.
աղաւթք հարին զվէմն յանապատին եւ բղխեաց ջուր ծարաւեացն:
5 Երանի մարդոյ որ հաւանեցաւ եւ եղեւ ընտանի հաւատոց
եւ աղաւթից.
ընակեցաւ միանձնութեամբ եւ զազարեցոյց առ իւր զաղաւթս
եւ զհաւատս:
Աղաւթք մարդոյ որ ի սրտէ ելանէ, այն է որ բանայն մեղ զդուռն
երկնից.
20 կայ եւ խաւսի ընդ աստուածութեանն եւ հաճէ զմիտս Աստուածորդոցն:
Աղաւթք զսրտմտութիւն Տեառն զազարեցուցանեն,
զաստիկ բարկութիւն նորա:
25 Այսպէս եւ արտասուք որ յաչաց ելանեն, մարթեն բանալ նմա
զդուռն ողորմութեանց նորա:
Եկայք տեսցուք զպատերազմողսն, որք յաղթեցին,
եւ առաքինացան հաւատովք եւ աղաւթիւք իւրեանց:
Աղաւթք արգելին զարեգակն ի Գարաւոն
եւ զլուսինն ի դաշտին Աղօնեայ.
30 Եւ գեւթնապարիսպն կործանեցին զերիքով քաղաքին մեծի
եւ զԱմաղեկ թագաւորան հանգերձ աւերեցին
եւ զՄիսարա սպանին
եւ զՄաղամ եւ զՍեհոն, զՈվք եւ զամենայն իշխանս նոցա.

Ա. Խորագիրը՝ Երանելոյն... ասորոց: չունի Կցորդ Ա.:
7 պատմեցից: — 13 զլորտամարզն: — 30 ի դաշտն: — 31 գաւթն սլ.:

35 զորոց ետ զերկիր նոցա ի ժառանգութիւն Իսրայէլի ժողովրդեան
 իւրում:
 Տուցանեմ ձեզ եղբարք, զոր գործեցին հաւատք եւ աղաւթք:
 Աղաւթք որ արգելին զարեգակն ի Գարաւոն,
 մարթեն արգելուլ զչարիս ի մէնջ:
 40 Եւ այն որ արգել զլուսինն ի դաշտին Աղոփեայ.
 եւ զեւթնպարիսպն աւերեաց զԵրիքով քաղաքի մեծի.
 եւ զԱմաղեկ թագաւորաւն հանդերձ վանեաց,
 վանէ եւ խորտակէ զգաւրութիւն սատանայի:
 Աղաւթք որ ետուն զմանանայն ժողովրդեանն,
 45 նովին աղաւթիւք եւ արգարք կերակրին:
 Աղաւթք որ զերկիրս կապեցին,
 որպէս կապեցին եւ դարձեալ արձակեցին:
 Աղաւթք ի ջուրն զհունն յերկնից, զպատարագն եկեր եւ զջուրն
 լափեաց:
 50 Աղաւթք ըմբռնեցին եւ կոտորեցին զչորեքճարիւր եւ զյիսուն
 քուրման Բահաղու.
 Եւ զքառասուն աւր աղաւթք եղեն ուղեկից մարգարէին.
 Եւ ի ներքս ի յայրի անդ ի Քորէք յայտնապէս խաւսեցաւ անդ ընդ
 աստուածութեանն:
 55 Կառք հրեղէնք լծեցան եւ իջին, առին վերացան նովաւ առ նա
 զոր սիրէրն:
 Ուրախ եղեն զուարթունք ի բարձունս ընդ վերանալ մարգարէին
 մարմնով յերկիրն:
 Աղաւթք խցին եւ կապեցին զբերանս առեւծուց ի ներքս ի գբի անդ
 60 եւ ոչ մեղան արգարոյն:
 Աղաւթք պահեցին զերիս մանկունս ի հրոյն բորբոքելոյ.
 Աղաւթք բացին զարգանդս ամլոցն եւ ետուն նոցա զժառանգս
 իւրեանց:
 2այս սքանչելիս եւ առաւել քան զսոյն գործեցին աղաւթք
 65 եւ հաւատքն հանապաղ:
 240 ...

39 զչարիս: — 40 աղոփեայ: — 48 եւ զջուրն: — 50 զչորեքճարիւր: — 52 ուղեկից: —
 55 լծեցան: նովաւ: դժուարքն եւնիլի: — 61 նոց(ա): — 67 յերէմիայ:

Կ Ց Ո Ւ Ր Դ Ք .

ԱՒՐՀՆԵԱԼ Է ՈՐ ԵՀԱՆ ՅԱՇՏԻՃԱՆՍ ԶՈՒԱՐԹՆՈՑ ԶՈՐԴԻՍ ՄԱՐԴԿԱՆ
 ՄԱՀԿԱՆԱՑՈՒՍ

1 Եղիա ի Ծորեր լերինն քառասուն աւր պահեաց.
 Նա ի ծործորն միայն նստէր, յագրաւուց միայն կերակրէր.
 Եւ զամենայն տիւ եւ զգիշեր յաղաւթս էր եւ ի հսկման:
 2ի չէր նմա կշտամբել զարքայն, զԱստուած աղաչէր աղաւթիւք.
 5 Եւ ի Քարմեղ միայն նստէր, զի պահեցէ զկուսութիւն իւր:
 Երիցս անգամ ելին առ նա զաւրազլուխքն յիսնիցն եւ յիսունքն.
 (Եւ ոչ մօտէր) ոք առ նա, զի ազգէին արտեւանք նորա:
 Այլեաց զճարիւրսն նախանձ նորա.
 Եւ կեցոյց զյիսունսն ողորմ նորա:
 10 Եւ իբրեւ եմուտ նա ի քաղաքն ազգաց, միանձնացաւ ի վերնատանն,
 Որչափ եղեւ առ այրւոյն. զի այրին ի վերնատունն ոչ եմուտ:
 Եւ իբրեւ կացոյց զմանուկն զայն՝ ոչ ետ տեսանել զյարութիւն
 նորա.
 Այլ իբրեւ նստէր նա ի տուն իւր, կեցոյց եւ իջոյց եւ ետ ցնա:
 15 Իբրեւ առ զմեռեալն եւ ել, տեսին զնա կանայք բազումք.
 2ի հայեցան ընդ մայրն նորա, եթէ լուսաց եւ զաղարեաց ի կոծելոյ:
 Եւ ոչ դատերք հեթանոսաց ժողովեցան կոխել զաշտիճանս Եղիայի.
 2ի ուսան նոքա յայրւոյն զպարկեշտութիւն մարգարէին:
 Եւ Եղիա ի մէջ լերանց եւ վանորայից պահեաց զնա.
 20 Եւ որդիք մարգարէիցն ի վանորայս նստէին
 Եւ ի Բեթէլ եւ յԵրիքով, զոր աւերեաց Յեսու:
 Եւ իբրեւ չոգաւ նա ընդ վարդապետին եւ ի դարձին առ նոսա եկն.
 Եւ իբրեւ մեռաւ մանուկն այն զոր ետ կնոջն Սոփնացոյն,
 ի Քարմեղ չոգաւ նա եւ ամ յարուցանել զորդին իւր,
 25 Միայն զնա եղիա անդ Գեհեղեաւ աշակերտաւ իւրով,
 Եւ զի գանդաղէր նա ի շինէ, առաքեաց զԳեհեղի փոխանակ իւր:
 Եւ Յեսու Նաւեայ եղբարք իւրովք ի վրան ժամուն պահեաց զնոսա:
 Անդ էր նա հանապազորդ, զի անդ էր եւ պաշտունն իւր:
 2ի որպէս Եղիա յեղիա հպեալ էր, եւ նա ի վարդապետն իւր:
 30 Ի սուրբ սրբոցն յարեալ էր նա. եւ ի լեառնն ել ընդ նմա:
 2ի երկիցս անգամ պահեաց Մովսէս աւուրս քառասունս.
 Երկիցս անգամ պահեաց Յեսու զաւուրսն,
 զոր պահեաց վարդապետն իւր.
 2ի ընդ նմա ելանէր նա, ընդ նմա եւ պահէր նա:
 2ի ոչ էր նա ի գլուխ լերինն, այլ էր նա ի մէջ լերինն:

Բ. Խորագիր. լուսանցքի վրայ (Կցուրդ) Բ.:
 1 պապէս Ծորեր փոխ. Քորեր: — 7 այս տողը շատ վնասուած է. ||| զրեւ ||| ն ոք
 առ նա զի ասոզէին արտեւանք: — 11 ի վերնատանն: — 12 ետ տեսանել: — 13 իբրեւ: —
 18 զի ուսան եւ զի ուսան: — 26 զգեհեղի: — 27 իւրով: — 29 եղիա:

Եւ Յովհաննէս յանապատին պահեաց զկուսութիւն իւր.
 2 Զերեսուն ամ տուրեւառ ոչ եղեւ նմա ընդ մարդիկ.
 3 Զբաւանք իւր ընդ Աստուծոյ, խորհուրդք իւր ընդ աւրէնան.
 սփոփանք իւր էին ընդ գաղանս,
 40 Եւ կերակուր մարախ եւ մեղր վայրի ուտէր նա.
 Որ կթատէր զոգիս մարդկան,
 զի ցուցցէ մեզ որ հաճեալ էր ընդ այն.
 Կերակուր ի նեղութենէ կողոյ եւ մեղու, զմեղր վայրենւոյն
 եւ զկերակուր մարախոյն հաւասարեաց:
 45 Ոչ եթէ կերակուրն պարարտ էր, այլ նմա իբրեւ զմեղր թուէր:
 Զոր ինչ ուրախութեամբ առնիցէ մարդ,
 թէ պէտ է մեծ իցէ քան զկար նորա, փոքրկանայ քան զկարն: 242
 Եւ եթէ իբրեւ զլեռնոն բարձրանայցէ ոք, դաշտ լինի առաջի նորա.
 Եւ եթէ նման ծովու մեծասցի, լինի փոքր ջրչեղջ:
 50 Եթէ հոգասցի՞ կուսանն, եթէ ուստի՞ կերակրեսցի նա
 ի միանձնանալն իւր.
 Ահա Եղիա աղքատ էր եւ Եղիշա աղքատասէր.
 եւ հաց մարդկան չգոյր նորա:
 Այն որ կերակրեաց զնոսա ի ծործորս եւ ի լերինս,
 55 Եւ ի բաց կարող է կերակրել զայն,
 որ վասն նորին իրի միանձնանան:
 Որ ի լեռնոն կամի ելանել, նմանութիւն իւր ունի զմարդարէս.
 Եւ որ ի շինի կամի բնակել, ունի իւր աւրինակ զԵղիա:
 Եթէ ի լեռնոն ոչ ելանես դու, զբնակութիւն Եղիայի բնակեա դու.
 60 Այն զի բնակեաց նա այնպէս, զի լինիցի նա մեղ վարդապետ:
 Եւ եթէ ըստ բնակութեան Եղիայի ոչ բնակեցուցես դու զանձն քո,
 Զարմանամ, եթէ զիս՞րդ պահեսցես, զոր ինչ մարդարէքն այն
 հոգւոյն ոչ կարացին պահել
 առանց այնր բնակութեան զոր գրեցի քեզ:
 65 Բայց մի ոք զմտաւ ամիցէ, եթէ ի հալածանաց լեռնապուր եղեն.
 Ի լեռնէ էջ Եղիա եւ քարոզեաց մահ որդւոյն Ախարու.
 Եւ զԵղիշա հայր աղաչէր Յովրամ արքայ Իսրայէլի,
 Եւ ի Յովհաննէ Հերովդէս ակն ամէր եւ պատուէր զնա:
 Ատեցին նոքա զչէն, զի լի են Աստուծոյ ցանկութեամբք.
 70 Եւ ընտրեցին զաշտիճան զուարթնոցն.
 եւ զի ոչ կարացին ելանել անդր,
 Ընտրեցին զանապատն, որ իւրք նման է վերին բնակութեանն.
 Զի չիք ի նմա ցանկութիւնք եւ ժողովին ի նմա միտք:
 Խնդրուածոյ անապատ պատշաճ է.
 75 զի ամենայն խորհուրդք խափանին ի նմա.

42 որ հահեալ: — 47 փոքրկանայ քան զկ[241ա]արն: — 48 զլեռնոն: nf (2. պ^o): —
 59 լեթէ: — 75 անապատշաճ է:

մարմնոյ բարի է ի միայնում ամն,
 քանզի ոչ տարեւածեն զնա ցանկութիւնք: 243
 Յամուր շինի բնակէ այն, որ հեռի է ի հպաւորաց.
 եւ ի մէջ ալեաց բնակեալ է, որ բազում են կցորդ իւր:
 80 Ուսարուք զի Որդին Աստուծոյ միանձնացաւ ի յաշակերտաց իւրոց.
 եւ եկաց յաղաւթս,
 զի երկոքումբք ուսուցէ խնդրուածս եւ միանձնութիւնս:
 Տուր, Տէր, զաւրութիւն լեռնականաց,
 եւ միանձնաց ժուժկայութիւն,
 85 եւ յաղաւթս բացականաց պահեսցին, որք են ի շինի:

Կ Յ Ո Ւ Ր Գ .

ՎԱՍՆ ԿՈՒՍՈՒԹԵԱՆ ԴԱՐՁԵԱԼ

1 Զի թէ փեսայ երկրաւոր զընկալուչս իւր, որ պահեցաւ նմա,
 մեծաւ շքով ամէ զնա, ի կառս նստուցանէ եւ ի փեսաւէրս տանի.
 ի պատիւ նմա կանթեղս վառէ առաջին նորա, եւ ընդ իւր
 յառազատս փեսայութեան մուծանէ զնա եւ ուրախ առնէ:
 5 փեսայն բարձանց առաւել գրգէ զնա՝ զկուսութիւն,
 եւ ի կառսն Եղիայի նստուցանէ եւ մեծարէ զնա.
 փառս վայելուչս զգեցուցանէ նմա,
 ի ժողովն զուարթնոցն բերկրի նա.
 սերովբէք եւ քերովբէք սլանան ընդ առաջ նորա:
 10 Եւ եթէ կուսութիւն որ պահեցաւ քաջութեամբ մի ամ կամ երկուս,
 զարդարին որմք վարազուրաւք եւ հրապարակք ամենայն
 կանթեղաւք.
 սրուիլս հարկանեն երիտասարդք եւ ջնարաւորք երգեն ջնարիւք.
 երգեցիկք փողովք իւրեանց եւ արուեստական նուագաւք իւրեանց:
 15 Կուսութիւն որ պահեաց զանձն իւր իբրեւ ամս յիսուն եւ ոչ սակաւ,
 իբրեւ զի գեղ ընդդէմ նորա էր եւ մարմին հակառակ նմա,
 եւ սատանայ զաւրաւք իւրովք պատերազմէր հանապազ ընդ նմա:
 Ի ժամանակի ծագման փեսային, 244
 յորժամ տեսանեն տիեզերք զնշան նորա,
 20 եւ ամաչեն խաչահանունքն այն եւ տազնապին ամենայն ուրացողք,
 եւ զարհուրին չարք ի խիթէ բանից իւրեանց եւ ի գործոց,
 նովաւ իբրեւ զարեգակն զարգարի փառաւք:
 Այն որ զգեցուցէ եւ ի ժամանակի,
 զի նստի իբրեւ զարքայ ի բեմբի մեծութեան իւրոյ,

82 երկոքումբք: — 86 բացականաց: վերջաւորութեամբ կատարեցաւ:
 9. Խորագիր. չուէի կցորդ Գ.:
 1 որ] ա՞ր: — 5 զկուսութիւն] և կուսութի: — 23 զգեցուցէ:

25 եւ զչարսն առակեալ յայծիս կացուցանէ զնոսա ի ձախմէ,
 եւ զբարիսն առակեալ զնոսա ի գառինս՝
 կացուցանէ զնոսա ընդ աջմէ,
 թուուցանէ զնոսա ընդ զուարթունս յաշխարհն յայն,
 զոր խոստացաւ նմա:

30 Ամենայն որ լինի ի կուսութեան, որ պահի վասն մարդկան,
 մարդկեղէն են հատուցմունք իւր,
 եւ ժամանակեան է փառաւորութիւնք իւր.
 զիչերն անցուցանէ զովեստն իւր,
 առաւաւտն հրաժարէ զխրախութիւն նորա,

35 ընդ գեշերին եւ առաւաւտուն որ անցանեն,
 անցանեն արժանիք ուրախութեան նմա:
 Կուսութիւն որ վասն սիրոյ՝ ինքն է տէր հատուցիչ նորա.
 եւ որպէս ոչ անցանէ տուողն, եւ ոչ անցանեն հատուցմունքն այն.
 պսակ եւ փառս զոր տայ նմա, յաւիտենից կայ ընդ նմա.

40 եւ առաքաւտ ուրախութեանն զոր պատրաստէ նմա,
 յուժումն յաւիտենից ոչ առնու:
 Չիք անդ աւուրք, զի ոչ գոյ անդ արեգակն,
 չիք անդ փոփոխմունք, զի ոչ գոյ անդ աստեղատունք.
 յաւիտենից ըմբոշինէ անդ ամենայն ոք,

45 առ յաւիտենից սեղանն ուրախութեանց նստուցանէ զնոսա
 որպէս խոստացաւ:
 Լոեն եւ անդ թշնամիք նորա. եւ հանգչի նա յամենայն մարտից. 245
 չիք տեսիլ որ փնասեն նմա, եւ ոչ հոգի որ մեղանչէ.
 եւ ոչ երազ որ խոսովէ զնա, զի խափանի քուն անդամոց:

50 Սահմանին ամենայն ընթացքն եւ կայ յաշտիճանի հատուցմանց.
 յուժանին պահք գրգանաւք եւ մինութիւն իւր
 խառնի ընդ զուարթունս:
 Անցանէ ամենայն գձձութիւն պատմութեանաց ի փառացն
 զոր զգենու նա. առանց ազտոյ լինի մարմին նորա.

55 ի չքեղանալ անդամոց իւրոց բառնին քող երեսաց նորա:
 Ո՞ր կարէ պատմել զի՞նչ հանդերձեալ է կուսութեան:
 զի անցանէ սուգ իւր յուրախութիւն. եւ լալումն իւր ի խնդութիւն.
 հասանէ կասկած իւր ի յոյսն այն, եւ ամենայն վաստակ իւր ի
 խնդութիւն:

60 Եւ ի հանգստեան խափանին լալիք եւ զբաւսանք,
 ի մտանել իւր ի չէն հանգստեալ.
 չիք անդ կասկած ի գողոց, զի եմուտ ի տուն ապաւինի.
 ոչ երկնչի ի փնասուց, զի վազեաց գորոգայթիւք.
 յամենայն ժամ սիրտ իւր բերկրի ի վաճառն իւր որ ոչ գերեցաւ.
 եւ հանգչի անձն իւր զի յուսացաւ, եթէ ըմբոնեաց զմարդարէս իւր.

33 ա՛ յայլս զովեստն. բերեւ զգովեստն: — 35 առաւաւտու ի նոր: — 36 արժարիք: —
 48 որ վասնեն նմայ:

զի յայսմաշխարհէ զերծու նա, զգործի սորա մերկացաւ նա.
 եւ զի յայն աշխարհ եմուտ. կոխեաց ոտն իւր զչէն երկիր:
 Չէ ինչ պիտոյ անդ վահան, զի խափանեցաւ անդ տէգ չարին.
 եւ ոչ զրահք պիտոյ են անդ, զի սպառեցան նետք թշնամուոյն,
 անդադար պատերազմաց:

70 Ցածնու նա ի յայտնել Որդոյ. եւ պարտի նա, խոյեանք նորա,
 ի ծագել փեսային սիրելոյ:
 Նոցա սպառնացեալ է յայտնումն նորա.
 եւ զնա ուրախ առնէ ծագումն նորա.

75 նոցա հատուցումն է ի մէջ գեհենին, եւ նմա յարքայութեանն:
 Յայն աշխարհ մոռացումն է նմա, 246
 զոր ետես զամենայն ի յայսմ աշխարհի:
 Անդ տեսանէ ի նենգիչս իւր, զի աղաչեն զնա (փրկել ի) հրոյ անտի.
 եւ տայ երանի անձին իւրում, զի ժամանակեան մարտիւ
 գնեաց զհատուցումն յաւիտենից:

80 ի ժամ խաւարելոյ արեգականն լուսաւորին աչք կուսանաց.
 եւ ի ժամ մթանալոյ լուսնին վառին փառաւք զգայունք իւրեանց.
 եւ իրրեւ զարեգակն եւ զլուսին լուսաւորին յարքայութեանն:
 վա՛յ, որ ի ծուլութեան իւրում ոչ պահեաց զմարգարիտ իւր.
 85 վա՛յ, որ ի լուծութեան իւրում առաւ բեռն մեծութեան նորա.
 վա՛յ այնմ որ ի քունն իւրում գողացաւ գանձանակ գանձու նորա:
 վա՛յ նմա որ նման Եսաւայ վաճառեաց զկուսութիւն իւր.
 վա՛յ այնմ որ լացցէ ի ժամու, զի ուրախ լինին ընկերք իւր.
 վա՛յ որ կարկեսցի բերան իւր ի բարձրաձայնել ընկերաց իւրեանց:
 90 վա՛յ այնմ որ մերկացաւ ի ժամու զգենլոյ փառաց եղբարց իւրոց.
 վա՛յ որ մնասցէ ի ժամ թուշելոյ ընդ ամպս ընկերաց իւրոց:
 Բժշկեա, Տէր, զլիւրաւորեալս եւ սպիտակացո զազտեղեալս.
 մի եղիցին մասն հրոյ, որք ընթացան ժառանգել զարքայութիւնդ.
 եւ մի եղիցին հանգիստ չարին, տեսանել զնոսա ընդ իւր ի հուրն:
 95 Անուն քո՛, Տէր, սպրեցուցանէ զամենայն,
 յորոց վերայ կոչեցեալ է անուն քո:

Կ Յ Ո Ւ Ր Գ Գ .

ԱՌՐՀՆԵԱԼ Է ՏԷՐ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՒՍՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՑ

1 Աւրհնեալ է փեսայն, որ գալովն իւրով բարձրացուցանէ
 զկուսութիւն.
 Եւ կուսութիւն եւ սրբութիւն խառնեն յիս զպատերազմ,
 զի պատմեցին առաքինութիւնք իւրեանց:

71 ի յայտնել: — 78 տեսանէ... զնայ ||| հրոյ անդի: — 87 նման սուտ: — 91 մնասցէ:
 յընկերաց: — 96 վերքը՝ կատարեցաւ:
 Գ. հորագիր. «Գ» լուսանցքի վրայ:
 4 պատմեցին:

5 Ահա ստիպեն զիս երկունք իւրեանց, զի ծնցին,
 եւ ի շրթանց իմոց լուիցեն յեկեղեցիս հեթանոսաց:
 Նախ ասէ Կուսութիւն եւ ապա Սրբութիւն:
 Սկսաւ ասել Կուսութիւն, եթէ.
 Ես ստեղծայ յառաջագոյն ընդ սկզբան աշխարհի առաջնոյ.
 10 Ես զգեցայ եւ զհառս. ես եզի եւ անուանս.
 Ես զիշխանութիւն ամենայն իրիք առի ի ծովու եւ ի ցամաքի:

ՍՐՐՈՒԹԻՒՆ

Հասի ես քեզ, ո՛վ Կուսութիւն, զի նոյ սկիզբն երկրորդ աշխարհի,
 որ պահեաց զիս ի մէջ տապանին, զերծաւ նա տապանաւն.
 Եւ զերծաւ ի ջրհեղեղէն, նուաճեցան ընդ նմա գազանք,
 15 Եւ ի նիշ աղեղանն զոր ետ նմա, արգել զջրհեղեղ յամենայն դարուց:
 Իմ էր նոյոյ սրբութիւն յառաջ քան զլինելն քո.
 զի զքեզ մի ամ միայն պահեաց եւ զիս պահեաց ամս հինգհարիւր.
 ոչ յամին յորում պահեաց զքեզ՝ առաւելաւ նա ի մէջ սրբոց.
 այլ զի պահեաց զիս ամս բազումս եւ ի մէջ շոայլեալ դարուն,
 20 ստաւելաւ նա մեծութեամբ:
 Ահա Մովսէս ի սրբութեան իւրում զիայտ մեռեալ կեցոյց նա.
 զձկունս կենդանիս կոտորեաց. մուն որ ոչ էր կենդանի՝ բղխեցոյց
 զմարախն որ էր սպառեաց, զջուրն յարին փոխեաց նա.
 զգորտս գետոյն բազմացոյց. խաղաւարտ մարդկան յաճախեաց:

ԿՈՒՍՈՒԹԻՒՆ

25 Եւ ահա Յեշով ի կուսութեան իւրում զՄադիամ մեծ աւերեաց.
 զգետս յետս դարձոյց, զժողովուրդն ընդ ցամաք անցոյց.
 զպարիսպն բարբառով կործանեաց, եւ զՐախար պոռնիկն կեցոյց.
 Եւ զթագաւորն երեսուն կոտորեաց,
 Եւ զերկիրն ժողովրդեան իւրում ժառանգեցոյց:
 30 Եւ Յեշով կուսութեամբ իւրով աշակերտէր Մովսէսի,
 զնա պաշտէր նա ի վրան ժամուն, եւ ի նմանէ ընկալաւ զհոգին.
 Կուսութիւնն Յեշովայ հայել ընդ երեսն Մովսիսի սրբոյ
 առանց քաղոյ դաստարակի ոչ կարէր զի տկար էր:
 Յաղթեաց Յեշով կուսութեամբ իւրով
 35 Եւ սատակեաց զգաւրս Ամադեկայ.
 զպոռնիկն որ դարձաւ, ապրեցոյց նա
 Եւ զԱքար որ գողացաւ, քարկոծեաց նա.
 Ինաց Մովսէս եւ ոչ անց ընդ Յորդանան,
 զի թերացաւ նա յանցս գետոյն.

12 Լուսանցքի վրայ հոս եւ վարք. «Կ» եւ «Մ». այսինքն Կուսութիւն եւ Սրբութիւն, սրբի կը մատարի. առած եւ բնագրին մէջ մանր գլխագիր:

12 հասի եւ քեզ: — 25 յէշով: — 28 Լ. (Երեսն): — 30 յեշով: — 33 յեշովա: — 35 դարս:

40 Եւ Յեսու եմուտ եւ ժառանգեցոյց զերկիրն,
 զոր Մովսէս ոչ ժառանգեաց.
 Եւ Յեշով որ ժառանգեաց ջանիւ զերկիրն,
 տեսցուք ընդ ո՛ւմ ժառանգեաց զնա.
 ընդ զուարթս՞նս եմուտ նա եւ ժառանգեաց,
 45 թէ ընդ քերովրէս եւ ընդ սերովրէս,
 ապա եթէ ընդ Րախարայ պոռնիկի,
 եւ ընդ երկրպագուս աւձին ժառանգեաց նա.
 յայտ է եթէ ոչ վասն թերութեան իւրոյ Մովսէս զրկեցաւ ի նմանէ:
 Յաղթէ քեզ, Սրբութիւն, կուսութիւն առաքինութեամբք իւրովք.
 50 արեղակն տոանց ականջաց լուաւ կուսանին եւ արգել զընթացս իւր.
 Եւ լուսին առանց լսելեաց ունկնդիր եղեւ եւ արգել զգնացս իւր.
 արգել նա զերկուս լուսաւորն եւ զաշխարհս ամենայն զարմացոյց:

ՍՐՐՈՒԹԻՒՆ

Յաղթութիւնն զոր էառ Յեշով կուսան, Մովսէս սուրբ ետ զնա նմա.
 ի յամբառնալ ձեռաց իւրոց յաղթէր նմա.
 55 Եւ ի խոնարհել ձեռաց իւրոց պարտեալ լինէր.
 Եւ եթէ յաղաւթան Մովսէսի յաղթէր նա,
 մեծ է յաղթեցուցիչն քան զյաղթողն.
 Եթէ յաղթութեամբ իւրով մեծ է Յեշով,
 Մովսէս յաղթեցուցիչն քանիա՛ւն մեծացի:
 60 Յաղթութիւնն զոր ետ Մովսէս ի նշան խաչելութեանն է.
 զի ի տարածանել ձեռաց իւրոց
 յաղթեցին եւ պարտեցան կողմանք երկրքինք.
 պարտեաց զժողովուրդն զոր յաղթեցոյց.
 Եւ զհեթանոսս, զոր պարտեաց, յաղթեցոյց.
 65 զի նկարեացէ զխորհուրդս կործանման եւ կանգնման,
 որ եղեւ ամենայնի:
 Յաղթէ քեզ, ո՛վ Կուսութիւն, սրբութիւն առաքինութեամբք
 իւրովք.
 զի որդին Ամրամու բաժանեաց զծովն
 70 Եւ զանդրանիկն Եգիպտոսի կոտորեաց ի ծովուն.
 Եհան եւ ընկղմեաց. զջուրն յանապատին քաղցրացոյց.
 Եւ ի վրմէ անտի բղխեցոյց գետս երկոտասանս:

ԿՈՒՍՈՒԹԻՒՆ

Հայեաց յեգիպ, զի կուսան էր, կապեաց նա զերկիրն եւ ելոյծ.
 Եւ յագուաւց կերակրեցաւ եւ ի Մարփաթ կենդանացոյց զմեռեալն.
 75 զաւփորն եւ զեղջիւրն բղխեցոյց եւ իջոյց հուր ի պատարագս իւր.
 Եւ բարժանեաց նա զգետն եւ անց, եւ հրեղէն երեվարաւք վարեցաւ:

42 յեսու: — 47 երկրպագուս: — 48 մունս: — 50 ականջանց: — 53 յաղթութիւն: — 57 յաղեցուցիչն:

ՍՐԲՈՒԹԻՒՆ

Հայեաց դու ընդ Մովսէս սուրբ, զի ի յաւթէվանան այն
 ետես զգաւրութիւն սրբոց հրեշտակաց.
 ետես ի մօրենուջն զԱստուած, ետես եւ ի լերինն.
 80 Իջոյց մանանայ ժողովրդեանն. եհան դարձեալ լորամարդ.
 հալածեաց ամպով զմութն այն.
 եւ զխաւար սեամբն այն փարատեցոյց:

ԿՈՒՍՈՒԹԻՒՆ

Ոչ եթէ ի վարուց քոց բարձր ես քան զիս, Սրբութիւն,
 զի ոչ ոք զիպեալ էր այնմ փրկութեան յեզիպտոսէ.
 85 Ըստ այնց զոր գործեաց Մովսէս պատերազմ զաւրութեամբ իւրով.
 եւ ոչ եթէ զի մեծ էր գործ եւ ձայն նորա,
 այլ զի ողորմած է տուիչն այն:
 Արդ քանզի զեզիպտացիսն հանդերձեալ էր ընկզմել ի ծոփն,
 եւ զՔանանու զթագաւորսն հանդերձեալ էր կոտորել նա.
 90 զՈվք թագաւոր սատակել եւ սպանանել զՍեհոն արքայ,
 զԱմադեկ աւերել, եւ կոտորել զՄադիանացիսն:
 Վասն այնորիկ արար զաւրութիւնս յեզիպտոս,
 զի հաւատասցէ եւ մի կորիցէ:
 95 Բարժանեաց զծոփն, զի երկեցուցէ զՈվք եւ զՍեհոն,
 զի մի կոտորեսցին.
 արար զաւրութիւն յանապատին, զի երկիցէ Ամադէկ եւ մի անկցի
 թէպէտ վասն կենաց նոցա ջանացաւ այսպէս,
 նոքա մարանչել եկին ընդ նմա:
 Եղեն զաւրութիւնք վասն Եզիպտոսի,
 100 զի կեցուցէ զաւրութեամբքն զեզիպտոս.
 բաժանեաց զծոփն վասն Սեհոնի,
 զի ի ձեռն ծովուն կեցուցէ զՍեհոն.
 Եւ վասն Ամադեկացոցն եղեն զաւրութիւնք յանապատին,
 աշխատեցին զՄովսէս զաւրութեամբք,
 105 զի ի Տէրն նորա ոչ հաւատացին:
 Մնաց այնուհետեւ, Սրբութիւն, եւ մի հպարտանար զաւրու-
 թեամբք.
 զի ամենայն պարգեւ որ Հոգւով տուեալ լինի,
 չէ նա պարծանաց մարդոյ.
 110 զի չէ նա ապատութեան իւրոյ,
 այլ որ առաւել վաստակի քան զամենայն:

90 րդովք: — 94 զգովք: — 103 ամադեկացոցն: — 108 լինին:

ԿՅՈՒՐԳ Ե.

ԿՈՒՍԱՆԱՑ ԵՒ ՍՐԲՈՑ ԱԻՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՐՔԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Մաքառունն որ եղեւ յերկրի, ունկնդիր լիցին նմա որոշողք:
 Կուսութիւն մաքառի ընդ սրբութեան լծակցի իւրոյ,
 զի ցուցցեն լսողաց իւրեանց թէ ո՞ք մեծ եւ առաւել է.
 ոչ եթէ ի վարուց եւ ի գործոց,
 5 այլ ի պարգեւաց Հոգւոյն սրբոյ:
 Յայտնի է, զի կուսութիւն առաւել աշխատէ,
 եւ սրբութիւն այն մեծ է,
 որ դարձաւ եւ եթուք յաշխարհս, յետ ճաշակելոյ զնա:
 Լուարուք զբանս կուսութեան եւ զկնի նորա զսրբութեան: 251
 10 Նայեաց դու յեզիպտոսն, որ ետ նա ի սպանունն զԱխար.
 եւ զեզարէլ շանց ետ ուտել.
 զորդիսն նորա մատնեաց ի սուր. եւ աւեր կոչեաց ժողովրդեանն.
 զհարիւրսն այրեաց ի հուր եւ զութհարիւր սուա մարգարէսն
 ինքն ձեռաւք իւրովք կոտորեաց:
 15 Եւ Եզեկիէլ մարգարէ սուրբ տեսլեամբ իւրով ի Սիոն չողաւ.
 զձածուկ պատկերսն յայտնեաց նա
 եւ զարեւոյաշտան զայն խայտառակեաց.
 զի ի բարձրաւանդակսն ելեալ նա՝
 ետես զսրբութիւնսն ի հուր մատնեալ.
 20 զքաղաքն ի կործանունն ետ եւ ծննդոց նորա եհատ զերունն:
 Անուանեալ էր Եզիլա կուսան, զի հոգի կրկին ընկալաւ նա.
 հաց քաղցելոց բազմացոյց, ջուր յանապատին բղխեցոյց.
 զՋուրս ի ձէթ փոխեաց նա. եւ զմահ կաթսային խափանեաց.
 զփայտն ընկզմեաց եւ փոխանակ նորա զերկաթն վերացոյց եհան:
 25 Յայտնի է զի եւ որդին Բուզայ զկնի այնր,
 զի առաւ ի նմանէ ցանկութիւն բրաց իւրոց,
 ետես զքերովբէսն զի լծեալ էին.
 ետես զՈրդի ի վերայ կառացն. եւ զԱստուած ի տեսիլ հրոյ.
 յուրեաց նա զոսկերս ցանեալս.
 30 Եւ կեցոյց զմեռեալս ձայնիւ իւրով:
 Յայտ է զի Եզիլա կուսան զՋուրս ախտաժեատ բժշկեաց.
 եւ զերիքով աւրհնեաց ի ծնունդս.
 եւ զմանկտին Բեթելայ կոտորեաց. 252
 զնեղման բորոտ սրբեաց եւ զԳեեզի սուրբ բորոտեցոյց.

Ե. Խորագիր. ի լուս. «Գ»: կատարածին՝ աւգնեա Աստուած:
 5 ի պարգեւաց:
 25—30 կրկնուած գրչին անուշադրութեամբ. կրկնակը ունի բերքեցուածի տարբերու-
 րիւններ. կը նշանակեմ «Կ» համառոտագրութեամբ:
 26 առ (ի նմանէ). Կ. առաւ: — 28 Կ. չունի եւ (զաստուած): — 30 կացոյց. Կ. կեցոյց:
 — 31 բժշկեաց:

35 Ի կեանս իւր կեցոյց մանուկ. եւ ի մահուն իւրում յարոյց զիտին:
Յայտնի է այս, եղբարք, զի Աննա դուստր Փանուելի,
ծնեալ ի սրբութեան իւրում զորդի,

զոր ոչ ծանեալ ժողովուրդն ի տաճարին սուրբ.
առ զնա ի գիրկս ընկալաւ հոգի, զի համբուրեաց զնա.

40 մարգարէացաւ եւ քարոզեաց զնա

աներկիւղ խաչահանուացն առաջի:

Քանզի մեծ էր եւ Դանիէլ կուսութեամբն իւրով ի Բարելին.

զի գերազ արքային եգիտ եւ գերազ երկրորդ մեկնեաց.

զգիր որմոյն ընթերցաւ նա, տեսեան հոգւոյն արժանաւոր եղեւ.

45 հրեշտակ աչաւքն ետես. ի գուրն առեւծուց անկաւ եւ ել նա:

Իսկ զՊաւղոսին, որ սրբեցաւ, ո՞վ պատմեացէ զառաքինութիւնն.

զի առաքելութեան արժանաւոր գտաւ

եւ յայտնութեան արժանաւոր եղեւ.

ի զրախան տեսեամբ եմուտ. եւ յերկինս ել երանելին.

50 զպատանին մեռեալ կեցոյց եւ զաւետիս հեթանոսաց քարոզեաց:

Ո՛ր բաւէ պատմել զայս որ եղեւ Յովհաննու կուսանի.

զի հոգի յորովայնէ ընկալաւ.

եւ առ մաւր իւրում զՏէր իւր քարոզեաց.

քաւութիւն պարտեաց տայր նա մկրտութեամբն զոր մկրտէր.

55 զՏէր իւր արժանի եղեւ մկրտել. եւ զիջանել հոգւոյն ետես նա:

Խելամուտ լիցուք այնմ որ եղեւ ի սրբութեան իւրում Ծմաւոնի,

զի հիմն եկեղեցւոյ արար զնա, ունել զաւրութիւն ետ նմա,

եւ զլուխ առաքելոցն ետ զնա. եւ զփականս հոգւոց շնորհեաց նմա.

արածել զխաչինս ետ նմա, լուծանել եւ կապել ետ նմա:

253

60 Ա՛ռ, հայեաց դու ի կուսութիւն. քանի պատուական էր առ

Յովհաննէս.

զի ի ժամանակի գողման աշակերտացն

եւ անկաւ նա զլանջաւքն Որդւոյ.

եւ զի նովաւ ուսցի սրբութիւն որ ինչ ծածուկն է ի նմանէ.

65 զի նմա յընթրիսն յայտնեաց թէ ով մատնէ:

Քան հայիս ի կուսութիւնն Յովհաննու, որ զգուեցաւ,

հայեաց դու ընդ Ծմաւոն սուրբ զի ի վերայ ջուրցն զնաց նա.

զՏարիթա մեռեալ կեցոյց. եւ զԱնանիա կենդանի մեռոյց.

առուեր եւ զաւտիք սրբոյն բժշկութիւնս ետուն հիւանդաց:

70 Դիւրին է զի կուսութիւն մեծ է եւ նախ քան զսրբութիւն.

զի զՈրդի նա ծնաւ եւ զկաթն զիեցոյց նմա.

եւ առ ոտս նորա նստաւ, մկրտութիւնս ետ նմա.

եւ ի խաչին առ նմա էր. եւ ի յարութեանն ետես զնա:

Կամեաց գիտել, ով կուսութիւն. զի կուսանք որ էին ի մարգարէս,

75 խոնարհագոյնք (էին) քան զՄովսէս.

51 յահանու: — 65 թէ մով մ. — 66 զըզուեցաւ: — 68 կրեցոյց: — 74 կամգեաց զիտել:

եւ կուսանք որ էին յառաքեալսն, խոնարհագոյնք էին քան զԾմաւոն.
զի յերկուս կտակարանսն սուրբքն եղեն առաքինիք:

2ի՞ մեծարանես ի վերայ իմ. ընթերցիր եւ տես, Սրբութիւն,
զի թէ բարձր ես քան զիս, որպէս կարծես,

80 բարձր է եւ քան զքեզ ամուսնութիւնն Աբրահամեանց:

Բայց ոչ եթէ ամուսնութիւնն բարձր է ի քէն, կամ դու քան զիս.

այլ պարզեաւք առաւելան մի քան զմի, զոր համարեցաք:

Մեծ է Պաւղոս սուրբ ըստ բանի քում քան զՅովհաննէս կուսան.

զի ասաց եթէ առաւել վաստակեցի քան զառաքեալսն,

85 որ յառաջ քան զիս էին.

Մեծ եւ քան զմարգարէս Մովսէս սուրբ.

254

եւ քան զառաքեալսն մեծ է Ծմաւոն,

ոչ եթէ վարուք եւ վաստակաւք,

այլ պարզեաւքն, զոր ընկալանն:

90 Բայց աշխատութիւն կուսութեան մեծ է քան զսրբութիւն.

նոյնպէս մեծ է հասուցումն իւր ըստ նմին աշխատութեան իւրոյ:

Յոյժ գովելի է որ պահեացն զնա ի զուարթնոցն, որ ստացաւն զնա.

եւ մեծ վա՛յ է որ կորոյսն զնա,

եւ ամաթ յաւիտենից ստանայ նովաւ:

95 Եւ եթէ կամեսցի առաքինանալ մեծաւ ջանիւ, գտանէ զնա.

զի չիք ինչ որ Աստուծոյ ոչ է զիւրին առնել որպէս եւ գրեալն է:

Տուր, Տէր, ձեռն զլորելոց զի կանգնեացին ի գլորմանէ.

Տուր, Տէր, զեղ վիրաւորաց, զի բժշկեացին կեղեքանք իւրեանց,

եւ զողայիւ այդ վթութեանդ քոյ սպիտակասցին ներկուածք նոցա:

76 յառաքեալսն: — 80 բարձր ես քան զիս: — 83 զյահաննէս: — 89 գոր ընկալանն: — 99 զթութեամբք քո: վերջաւորութեան՝ կատարեցաւ: